Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
նոյեմբերի 14-ի N 1617-Ն որոշման

# ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՆՈՐԻՏԱՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| | **Գործողություն** | **Պատասխանատու մարմին/համակատարողներ** | **Ժամկետ** | **Հղում** |
|---|---|---|---|---|
| 1. | Օրենսդրական դաշտի ուսումնասիրություն՝ առաջնահերթ ՊՄԸ-ի ժողովում Ֆինանսների նախարարության, Համակարգող մարմնի և Ոլորտային մարմնի ներգրավվածությունն ապահովելու նպատակով ՊՄԸ-ի կառավարման միջգերատեսչական հանձնաժողով ձևավորելու նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը պարզելու համար | Համակարգող մարմին | 2026, 2-րդ եռամսյակ | 16-րդ կետ |
| 2. | ՊՄԸ-ների ֆինանսական ցուցանիշների հավաքագրում, վերլուծություն, Քաղաքականությամբ սահմանված բանաձևի հաշվարկների հիման վրա առաջնահերթ ՊՄԸ-ների ընդլայնված ցանկի կազմում | Ֆինանսների նախարարություն/ Համակարգող մարմին | 2026, 3-րդ եռամսյակ | 4-րդ կետի 7-րդ ենթակետ |
| 3. | Հայաստանի ֆոնդային բորսայում ընկերությունների ցուցակման նպատակով կարողությունների զարգացում | Համակարգող մարմին/ Էկոնոմիկայի նախարարություն | 2026, 4-րդ եռամսյակ | 13-րդ կետ |
| 4. | Օրենսդրական դաշտի ուսումնասիրության արդյունքներով, անհրաժեշտության դեպքում, համապատասխան օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների նախաձեռնում | Համակարգող մարմին/ Ֆինանսների նախարարություն | 2026, 4-րդ եռամսյակ | |
| 5. | Առաջնահերթ ՊՄԸ-ների վերջնական ցանկի և յուրաքանչյուր առաջնահերթ ՊՄԸ-ի սեփականության հիմնավորման հայտարարագրի մշակման ծրագրավորվող ժամանակացույցի սահմանում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից | Ֆինանսների նախարարություն/ Համակարգող մարմին | 2026, 4-րդ եռամսյակ | 4-րդ կետի 7-րդ ենթակետ, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6. | Հանձնաժողով ձևավորվելու դեպքում՝ յուրաքանչյուր առաջնահերթ ՊՄԸ-ի կառավարման միջգերատեսչական հանձնաժողովի կազմի սահմանում Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից | Համակարգող մարմին/ Ֆինանսների նախարարություն | 2026, 4-րդ եռամսյակ | 16-րդ կետ |
| 7. | ՄՄԸ-ների բաժնետոմսերի կառավարման փոխանցում Համակարգող մարմնին | Համակարգող մարմին/Ոլորտային մարմին | 2026, 4-րդ եռամսյակ | 53-րդ կետ |
| 8. | «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Քաղաքականության ընդունման արդյունքում հարակից իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխություն-ների մշակում՝ սույն քաղաքականության դրույթներն արտացոլելու նպատակով | Համակարգող մարմին/Ոլորտային մարմիններ/Ֆինանսների նախարարություն | 2026, 4-րդ եռամսյակ | |
| 9. | Ըստ անհրաժեշտության՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության փոփոխությունների նախաձեռնում՝ Մրցակցության և սպառողների պաշտպանության հանձնաժողովի լիազորությունների հստակեցման նպատակով | Մրցակցության և սպառողների պաշտպանության հանձնաժողով (համաձայնությամբ) | 2026, 4-րդ եռամսյակ | |
| 10. | ՊՄԸ գործարար ծրագրի օրինակելի ձևի, դրա հաշվետվողականության մշտադիտարկման և պահանջների սահմանում | Համակարգող մարմին | 2026, 4-րդ եռամսյակ | 27-րդ կետ |
| 11. | ՄՄԸ-երում պետության սեփականության նպատակների՝ սույն Քաղաքականության նպատակներին համապատասխանության ուսումնասիրություն | Համակարգող մարմին | 2026, 4-րդ եռամսյակ | 48-րդ կետ |
| 12. | Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակման նպատակով ընկերությունների ընտրության մեխանիզմների սահմանում | Համակարգող մարմին/Ոլորտային մարմին/Ֆինանսների նախարարություն/ԱՄՀ (համաձայնությամբ) | 2027, 1-ին եռամսյակ | 42-րդ կետի 15-րդ ենթակետ |
| 13. | Սույն Քաղաքականության շրջանակներում ռազմավարական նշանակություն ունեցող ակտիվների ցանկի հաստատում | Համակարգող մարմին/ Ոլորտային մարմիններ, Ֆինանսների նախարարություն | 2027, 1-ին եռամսյակ | 7-րդ կետի 4-րդ ենթակետ |
| 14. | Ռազմավարական ակտիվների պահպանման համար ծախսերի հաշվարկման մեթոդաբանության և կիրառման կարգի հաստատում | Ֆինանսների նախարարություն/ Քաղաքաշինության կոմիտե | 2027, 1-ին եռամսյակ | 44-րդ կետ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 15. | Հանրային ծառայության պարտավորությունների և ռազմավարական նշանակություն ունեցող ակտիվների պահպանման համար սահմանված վճարների ռեեստրի հիմնում և վարման կարգի հաստատում | Ֆինանսների նախարարություն | 2027, 1-ին եռամսյակ | 46-րդ կետ |
| 16. | Ֆիսկալ ազդեցությունների գնահատման, քվազի-ֆիսկալ գործողությունների նույնականացման, հաշվարկման և հատուցման մեթոդաբանության հաստատում | Ֆինանսների նախարարություն | 2027, 1-ին եռամսյակ | Գլուխ 7 |
| 17. | Ֆինանսական արդյունավետության թիրախների և ռիսկերի հանդուրժողականության սահմանման գործընթացի ուղեցույցների, շահութաբերության մակարդակի հաշվարկման մեթոդաբանության հաստատում | Ֆինանսների նախարարություն | 2027, 1-ին եռամսյակ | 5-րդ կետ, 21-րդ կետ, 43-րդ կետի 6-րդ ենթակետ |
| 18. | ՊՄԸ-ի խորհրդի անդամներին ընտրության, վարձատրության չափանիշների և ընթացակարգի մշակում | Համակարգող մարմին | 2027, 1-ին եռամսյակ | 42-րդ կետի 14-րդ ենթակետ |
| 19. | ՊՄԸ-ի խորհրդի անդամների մասնագիտական գիտելիքների, փորձառության չափանիշների և գնահատման կարգի սահմանում | Համակարգող մարմին, Էկոնոմիկայի նախարարություն, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով | 2027, 1-ին եռամսյակ | 67-րդ կետ |
| 20. | Առաջնահերթ ՊՄԸ-ների խորհրդի գործունեության գնահատման կարգի և մեթոդաբանության սահմանում | Համակարգող մարմին | 2027, 1-ին եռամսյակ | 76-րդ կետ |
| 21. | Բացառապես առևտրային նպատակներ ունեցող և քաղաքականության նպատակներին չհամապատասխանող ՊՄԸ-ների ելքի մոտեցումների հաստատում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից | Համակարգող մարմին | 2027, 1-ին եռամսյակ | 11-րդ կետ |
| 22. | Ցուցակման ենթակա ընկերությունների ցանկի կազմում և հաստատում | Համակարգող մարմին/ Ոլորտային մարմին/ Ֆինանսների նախարարություն/AMX (համաձայնությամբ) | 2027, 2-րդ եռամսյակ | 42-րդ կետի 16-րդ ենթակետ |
| 23. | Սեփականության հիմնավորման հայտարարագրի լրացման, կատարողականի, հաշվետվությունների և գնահատման ուղեցույցների հաստատում | Համակարգող մարմին/ Ոլորտային մարմիններ/Ֆինանսների նախարարություն | 2027, 2-րդ եռամսյակ | 42-րդ կետի 6-րդ ենթակետ, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | 42-րդ կետի 13-րդ ենթակետ |
| 24. | Ֆինանսական և ոչ ֆինանսական կատարողականի չափորոշիչների, մշտադիտարկման և հաշվետվողականության պահանջների սահմանում | Ֆինանսների նախարարություն/ Համակարգող մարմին/ Ոլորտային մարմին | 2027, 2-ին եռամսյակ | 24-րդ կետ, 43-րդ կետի 5-րդ ենթակետ |
| 25. | Արտաքին աուդիտի ընտրության ընթացակարգի, ստանդարտացված որակավորման պահանջների և տեխնիկական առաջադրանքի ուղեցույցների հաստատում | Ֆինանսների նախարարություն | 2027, 2-րդ եռամսյակ | |
| 26. | Հանրային ծառայությունների պարտավորությունների նույնականացման և գնահատման մեթոդաբանության և կարգի հաստատում | Ֆինանսների նախարարություն | 2027, 4-րդ եռամսյակ | 45-րդ կետ |
| 27. | Ռիսկերի կառավարման, համապատասխանության և ներքին աուդիտի կարգավորումների սահմանում | Համակարգող մարմին/ Ոլորտային մարմին/ Ֆինանսների նախարարություն | 2027, 4-րդ եռամսյակ | 83-րդ կետ |
| 28. | ՊՄԸ-ների նպատակների նույնականացում | Համակարգող մարմին/Ոլորտային մարմին | 2028, 3-րդ եռամսյակ | 7-րդ կետ, 18-րդ կետ |
| 29. | Բացառապես առևտրային նպատակ ունեցող ՊՄԸ-ների փոխանցում Համակարգող մարմին | Համակարգող մարմին/Ոլորտային մարմին | 2028, 4-րդ եռամսյակ | 59-րդ կետ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ